Հետազոտական աշխատանք

Տիտղոսաթերթ (1 էջ)

Կազմակերպության տվյալներ ● Անվանում, հասցե ● Տնօրեն ● Էլ.հասցե ● Հեռախոս	«Մասնակցային դպրոց» կրթական հիմնադրամ Վահրամ Սողոմոնյան masnakcayindproc@gmail.com
Հետազոտության թեմա/վերնագիր ● Հետազոտության թեմա	Լեզվական գրագիտության եվ կարողանունկաբյան զարգացումը 10-րդ դասարանի աշակերտների մոտ հայոց լեզվի դասաժամերին
Ուսուցչի տվյալներ ● Ա.Ա.Հ. ● Մասնագիտություն ● Հեռախոս ● Էլ. հասցե ● Դասավանդվող առարկաներ ● Դասարաններ	Ալվարդ Խաչատրյան Զախարի Բանասեր Հայոց լեզու և գրականություն 10, 11, 12-րդ դասարաններ
Ուսումնական հաստատության տվյալներ ● Անվանումը, հասցե ● Հեռախոս ● Էլ. հասցե (տնօրենության) ● Web կայքի հասցե	Աբովյանի Արթուր Վանոյանի անվան թիվ 6 ավագ դպրոց 60750027 abovyan6@schools.am abovyan.schoolsite.am

ԼԵԶՎԱԿԱՆ ԳՐԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԿԱՐՈՂԱՆՈՒԿԱԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ 10-ՐԴ ԴԱՍԱՐԱՆԻ ԱՇԱԿԵՐՏՆԵՐԻ ՄՈՏ ՀԱՅՈՑ ԼԵԶՎԻ ԴԱՍԱԺԱՄԵՐԻՆ

Հայոց լեզու, դու մեր անկողոպտելի գանձը եղար, մեր անընկճելի հայրենիքը: Մեր ժողովուրդը կորցրեց գահ և թագ, զորք և իշխանություն, ավեր եղան և ավար մեր բերդերն ու քաղաքները, ավար եղան մեր ինչքն ու գույքը, բայց դու մնացիր միայն կանգուն, մնացիր հաղթական: Ցնցոտի հագավ մեր ժողովուրդը, բայց դու ծիրանիով ծածկեցիր նրա հոգին, թշնամին ջախջախեց նրա սրունքները, դու թևեր տվիր նրան՝ ժողովրդին:

Ավետիք Իսահակյան

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Հայերենը աշխարհի հնագույն լեզուներից է: Ձևավորվելով դեռևս վաղնջական ժամանակներից, անցնելով պատմության քառուղիներով՝ մեր լեզուն էլ մեր ժողովրդի նման դիմակայել է բազում փորձություններին, բռնել ժամանակի ընթությունը և միշտ էլ եղել է աշխարհի առաջավոր լեզուների շարքում: Եվ այսօր էլ մեր լեզուն առաջավոր գիտության, մշակույթի ու գրականության, հանրակրթության և բարձրագույն դպրոցի, կինոյի ու թատրոնի լեզու է: Ժամանակակից մարտահրավերները նոր խնդիրների առաջ է կանգնեցրել մեր հայրենիքը և մեր ժողովրդին: Օրեցօր աճող վտանգները պետք է հաղթահարել գիտատեխնիկական նվաճումներին, թվային, տնտեսագիտական, ֆինանսական, իրավական, քաղաքացիական գրագիտությանը և կարողունակություններին տիրապետող քաղաքացիների շնորհիվ: Այդ քաղաքացիները ձևավորվում են այսօր դպրոցում , և օրվա հրամայականն է բարձրացնել լեզվական գրագիտության կարողունակությունը,սովորեցնել բանավոր և գրավոր ձևերով ճանաչել, ըմբռնել, արտահայտել, ստեղծել և մեկնաբանել տարբեր հայեցակարգեր, փաստեր և կարծիքներ՝ օգտագործելով տարբեր առարկաներին և իրավիճակներին առնչվող տեսողական, ձայնային և թվային նյութեր:

Այս աշխատանքում մենք նպատակ ունենք վեր հանել դպրոցում առկա խնդիրները՝ կապված լեզվական գրագիտության, աշակերտների մոտ հաղորդակցության ժամանակ օտարաբանությունների, ժարգոնային բառերի և արտահայտությունների օգտագործման, լեզվական գրագիտության ոլորտում եղած խնդիրների մասին: Խնդիրները բարձրաձայնելու հետ մեկտեղ կփորձենք ներկայացնել այդ հարցի հետ կապված մեր աշխատանքի փորձը, ինչպես նաև ներկայացնել կատարվելիք հետազոտությունների արդյունքները:

ԼԵԶՎԱԿԱՆ ԳՐԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ և ԿԱՐՈՂՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆ

Յուրաքանչյուր մարդ իր գիտակից կյանքում իր առաջին բառերը ասում է մայրենի լեզվով, ասում է սկզբում թոթով լեզվով, հետո տարիների ընթացքում ավելի հստակ ու վստահ՝ ընդլայնելով բառապաշարի եզրերն ու խորությունը: Դպրոց մտնելու առաջին օրից երեխան իր համար բացում է լեզվի զարմանահրաշ գրքի մի նոր էջ, հարստացնում բառապաշարը, սովորում քերականական կանոններ, ուղղագրություն և ուղղախոսություն: Մայրենի լեզվին զուգընթաց սովորում են օտար լեզուներ, սովորում հաղորդակցվել նաև այդ լեզուներով: Դպրոցում երեխային սովորեցնում են գրավոր և բանավոր կերպով գրագետ հաղորդակցվել մայրենի և ուսուցանվող օտար լեզվով: Դա դպրոցում՝ ուսուցիչների անմիջական ներկայությամբ և օգնությամբ: Դրանից հետո երեխան հայտնվում է այլ միջավայրում՝ բակ, ընտանիք, արտադպրոցական խմբակներ, լրացուցիչ պարապմունքներ, և դժվար է պատկերացնել, որ այդ միջավայրերում երեխան և նրան շրջապատող միջավայրը անհանգստացած են լեզվի մաքրության և անաղարտության հարցով:

Երեխան լսում , և ինքն էլ սկսում է հաղորդակցվել գրական լեզվի, օտարաբանությունների, բարբառային և ժարգոնային բառերի մի յուրատեսակ խառնուրդով:Այդ ամենին ավելանում է հեռուստատեսությունը. Ոչ գրագետ հայերենով մատուցվող հաղորդումներ, հայկական արտադրության և թարգմանված ֆիլմեր: Երեխան ունի ընտրության հնարավորություն ու ցանկություն, և ընտրությունը սովորաբար լինում է ոչ գրագետ խոսքի օգտին:

Տարիների ուսումնասիրությունը, աշխատանքային գործընթացը , և շփումը աշակերտների հետ ցույց է տվել, որ աշակերտները ավագ դպրոց ոտք են դնում ադեքատ բառապաշարով, բանավոր և գրավոր խոսք կառուցելու համեստ հնարավորություններով: Դասից դուրս հաղորդակցության, շփումների , զրույցների ժամանակ նրանք բավականին ակտիվ են, անկաշկանդ, կարողանում են իրենց ասելիքը տեղ հասցնել, ստանալ և կիսվել նոր տեղեկատվությամբ, խոսել իրենց հետաքրքրող թեմաների մասին: Սակայն նույն աշակերտը դասի ժամանակ շատ հաճախ դժվարանում է ձևակերպել մտքերը, կարծիք և տեսակետ հայտնել որևէ թեմայի վերաբերյալ:

Յուրաքանչյուր ուսումնական տարվա սկզբում 10-րդ դասարանի աշակերտներին հանձնարարում ենք հայտորոշիչ թեստ՝ ծանոթանալու նրանց գիտելիքներին և կարողունակություններին: Թեստում ընդգրկվում են հիմնական դպրոցում անցած թեմաներին վերաբերող հարցեր: Աշակերտներին առաջարկվում նաև որևէ թեմա բառապաշարին, ստեղծագործական կարողություններին, մտքերը շարադրելու, տեսածը, լսածը վերարտադրելու ունակություններին ծանոթանալու համար: Որպես կանոն

նրանք գրում են երկու- երեք նախադասություն , չեն օգտագործում պատկերավորման միջոցներ, հնչերանգային նախադասություններ, բառապաշարը շատ աղքատիկ է: Նրանք չեն կարողանում ճիշտ փոխանցել իրենց զգացածը, տեսածը, ապրածը, դժվարանում են ընտրել ճիշտ բառը, արտահայտությունը: Սակայն, երբ դասից դուրս նրանց հետ նույն թեմայով անկաշկանդ զրույց ենք անցկացնում, նրանք կարողանում են խոսել, հաղորդակցվել: Այդպիսի զրույցների ժամանակ օգտագործում են առօրյա-խոսակցական ոճին բնորոշ բառեր, արտահայտություններ, օտարաբանություններ, ժարգոնային բառեր: Աշխատանքն ինքնանպատակ չէ և միտված է աշակերտների լեզվական գրագիտության բարելավմանը:Մենք ոչ միայն ցույց ենք տալիս նրանց բանավոր և գրավոր խոսքի թերությունները, լեզվական գրագիտության պակասը, այլև օգնում ու սովորեցնում ենք նրանց ճիշտ և գրագետ կառուցել խոսքը ոչ միայն հայոց լեզվի, այլ նաև մյուս դասաժամերին: Աշակերտները հասկանում են, որ լեզուն պետք է կիրառեն որպես ուսումնառության և հասարակական կյանքին մասնակցության համապիտանի գործիք: Ավագ դպրոցի աշակերտները, ովքեր մեր երկրի ապագա քաղաքացիներն են պետք է լեզվական գրագիտության շնորհիվ կարողանան հանաչել, ըմբռնել, արտահայտել, ստեղծել և մեկնաբանել տարբեր հայեցակարգեր, փաստեր և կարծիքներ՝ օգտագործելով տարբեր առարկաներին և իրավիճակներին առնչվող տեսողական, ձայնային և թվային նյութեր:

Լեզվական գրագիտության և կարողունակությունների զարգացմանը միտված աշխատանքներն ամենօրյա են, հետևողական և շարունակական: Դասից դաս աշակերտը պետք է տեսնի, զգա, հասկանա իր լեզվական գրագիտության աճը, բառապաշարի, ուղղագրական և ուղղախոսական գիտելիքների հարստացումը: Դրանք հենց այնպես չեն տրվում: Օգտագործելով նաև սովորել սովորելու կարողունակությունը՝ աշակերտները ինքնուրույն և մյուսների հետ արդյունավետ սովորում են, մտքում և հղկում իրենց լեզուն, խոսքը: Եթե ուսումնական տարվա սկզբում աշակերտների մոտ մի տեսակ վախ, անհարմարություն, կաշկանդվածություն կար մյուսներից չտարբերվելու, չառանձնանալու, ինքնադատության առարկա չդառնալու առումով, ապա ուսումնական տարվա ընթացքում և ավարտին նրանք արձանագրում են, որ իրենք կարողանում են ավելի հարուստ բառապաշարով ներկայացնել ցանկացած թեմա: Նրանք կարողանում են իրենց գիտելիքները ճիշտ կիրառել, վերլուծել, ձևակերպել իրենց դատողությունները: Ի վերջո գիտելիքի խմացությունը օգնում է նրանց զարգացնել ինքնական մտածողությունը և կիրառությունը:

ԻՆՉՊԻՍԻ՞Ն Է ԼԵԶՎԱԿԱՆ ԳՐԱԳԻՏՈՒԹՅՈՆԸ ԱՇԱԿԵՐՏՆԵՐԻ ՄՈՏ

ՀՀ հանրակրթության պետական չափորոշչի պահանջներով հանրակրթական դպրոցի շրջանավարտը պետք է՝ ազատ գրավոր և բանավոր հաղորդակցվի գրական հայերենով, կարդա, հասկանա, վերարտադրի պարզ գեղարվեստական և տեղեկատվական տեքստեր, ձևակերպի տեքստի հիմնական գաղափարը: Առնվազն երկու օտար լեզվով, այդ թվում այլընտրանքային հաղորդակցման միջոցներով, հասկանա և օգտագործի ծանոթ և պարզ նախադասություններ՝ բավարարելու կոնկրետ կարիքները, կարողանա ներկայանալ, ներկայացնել իր շրջապատի մարդկանց՝ իր և նրանց մասին հաղորդելով պարզ տեղեկություններ, հաղորդակցվել գրավոր և բանավոր՝ գործածելով պարզագույն կառույցներ: Նա պետք է կարողանա մտքերն արտահայտելիս բերի պարզ հիմնավորումներ, կատարի ընդհանրացումներ և պարզ դասակարգումներ, դրսևորի տրամաբանական և ստեղծագործական մտածողություն, կարողանա անդրադառնալ ու արձագանքել սեփական և ուրիշների ստեղծած աշխատանքին:

Ավագ դպրոցի 10-12-րդ դասարաններում հիմնական դպրոցում անցած նյութի կրկնությանը զուգահեռ ուսուցանվում է ռճագիտություն, որը սովորողին հնարավորություն է տալիս կատարելագործել խոսք կազմելու կարողությունը՝ ճիշտ և գրագետ համադրելով լեզվաբերականական միավորները, կիրառելով հայոց լեզվի ոճական առանձնահատկությունները: Գրականության ուսումնասիրությունը նպաստում է սովորողի՝ պատմական ժամանակաշրջանի, հեղինակների կենսագրության, տվյալ գրողի բերած նորության, հայ գրականության զարգացման վրա ունեցած ազդեցության, գրական սեռերի, ժանրերի, ժամանակաշրջանի հետ անմիջական կապի մասին պատկերացնման ձևավորման:

Գրական երկի ուսումնասիրությունը նպաստում է ստացած գիտելիքը սեփական խոսքով վերարտադրելու հմտությունների, վերլուծական և քննական կարողությունների, ինչպես նաև գրական ճաշակի ձևավորմանը, ազգային ինքնության ճանաչմանը և ձևավորմանը:

Ավագ դպրոց եկած աշակերտը դեռևս հստակ չի պատկերացնում , թե ինչ խնդիրների առաջ է ինքը կանգնած, ինչ միջոցներով և ճանապարհներով պետք է լուծի դրանք: Այնինչ ուսուցիչը հստակ պետք ունենա իր տեսլականը, դրան հասնելու քայլերի ալգորիթմը և դրանց մասնակից դարձնի նաև աշակերտներին: Այս առումով կրկնակի պարտավորեցնող է հայոց լեզվի ուսուցչի դերը, որովհետև

աշակերտի համար լեզվական գրագիտությունը կարևոր ոչ միայն հայոց լեզվի և գրականության դասաժամերին, այլև դա միջոց և հնարավորություն է մյուս առարկաները յուրացնելու գործում:

Մենք վերևում ներկայացրինք, թե տարիներ շարունակ ուսումնական տարվա ընթացքում ինչ ֆայլեր են կատարվել և կատարվում ավագ դպրոցի աշակերտների մոտ լեզվական գրագիտության կարողունակությունները զարգացնելու ուղղությամբ: Ստորև կներկայացնենք նոր ուսումնական տարում 10-րդ դասարանների աշակերտների հետ նախատեսված ֆայլերը, դրանց հաջորդականությունն ու շարունակականությունը ցանկալի վերջնարդյունքին հասնելու ճանապարհին: Այս ուսումնական տարում աշխատելու ենք հումանիտար և տնտեսագիտական հոսքի աշակերտների հետ: Ինչպես միշտ առաջին դասաժամերին անցկացրինք հայտորոշիչ թեստ՝ ծանոթանալու դպրոց եկած աշակերտների կարողություններին , գիտելիքներին և հմտություններին: Լեզվաբերական հարցերի հետ մեկտեղ թեստի վերջում զետեղված էր հարց- վերնագիր, որը հնարավորություն էր տալու ծանոթանալ աշակերտների բառապաշարին, մտքերը շարադրելու, զգացածը, մտածածը հաղորդելու կարողությանը: Հումանիտար հոսքի համար առաջադրվեց<<Իմ ամենանվիրական երազանքին հասնելու համար ես...>>, իսկ տնտեսագիտական հոսքի աշակերտներին՝<<Եթե ես կարողանայի փոխել աշխարհը... >> նախադասություն վերնագրերը, որոնք իրենց շարադրանքներով աշակերտները պետք է ամբողջացնեին:

Մի կողմ թողնելով և չքննարկելով լեզվաբերականական հարցերի պատասխանները՝ անդրադառնանք վերը նշված հարցերի պատասխաններին: Երկու դասարաններում էլ ընտրել էինք այնպիսի թեմաներ, որոնք բավականին խոսուն էին, սրտամոտ և հոգեհարազատ այդ տարիքի երեխաների համար : Սակայն աշակերտների մեծ մասը՝ գրեթե 80% , մտքերն արտահայտել էր 1-2 նախադասության միջոցով, օրինակ՝<<Իմ ամենամեծ երազանքն է լինել Ամերիկայում >> ,<< Ես երազում եմ լինել Փարիզում >>, << Ես երազում եմ թարգմանչուհի դառնալ >> , << Եթե ես կարողանայի փոխել աշխարհը, կվերացնեի բոլոր գենքերը >>, <<Եթե ես կարողանայի փոխել աշխարհը, այն կմաքրեի աղբից ու թափոններից >> , <<Եթե ես կարողանայի փոխել աշխարհը, երեխաների համար նոր դպրոցներ ու գրքեր կստեղծեի > և այս կարգի ձևակերպումներ: Աշակերտների մի մասը՝ մոտ 15% , գրել էր փոքր-ինչ ընդարձակ տեքստ՝ անդրադառնալով իրենց ցանկություններին, նպատակներին ու երազանքներին: Այս երկու խմբի աշակերտների մոտ էլ կային ուղղագրական, կետադրական և ոճական սխալներ: Միայն աշակերտների մի փոքրիկ խումբ՝ մոտ 5% , կարողացել էր մտքերը ճիշտ և գրագետ ձևակերպել՝ գրելով փոքրիկ, բայց գեղեցիկ և հետաքրքիր տեքստ: Պետք է նշել նաև, որ տնտեսագիտական հոսքի աշակերտների մոտ և՛ լեզվաբերականական հարցերի պատասխանները, և՛ ստեղծագործական աշխատանքը ավելի ճիշտ էր և գրագետ շարադրված, քան հումանիտար հոսքի

աշակերտների մոտ: Հաջորդ դասին հետադարձ կապի սենդվիչի միջոցով անդրադարձանք աշխատանքներին, նշեցինք՝ ի՞նչն է լավ կատարված, ի՞նչն է պետք բարելավել և ինչպե՞ս բարելավել: Քանի որ արդյունավետ հետադարձ կապերը հիմք են արդյունավետ հարաբերությունների, աշխատեցինք, որ այն լինի

ժամանակին, ճիշտ և արդյունավետ:

Ուսումնական տարվա առաջին օրերին մեր ուշադրության կենտրոնում էր նաև 10-րդ, և ոչ միայն, դասարանների աշակերտների բանավոր խոսքը. ինչպե՞ս են շփվում, հաղորդակցվում միմյանց հետ, ինչպիսի՞ բառապաշար ունեն, ինչպիսի՞ բառեր են գերակշռում, պահպանո՞ւմ են արդյոք լեզվաբերականական կանոնները: Դասերի ժամանակ՝ հետևելով մեր պահանջներին, նրանք աշխատում էին խոսել հնարավորինս ճիշտ, չօգտագործել օտարաբանություններ, ժարգոնային բառեր:

Դասից դուրս, երբ ավելի ազատ են, խոսում են այնպես, ինչպես ուզում են: Հիմնականում թույլ էին տալիս լեզվաբերականական, սխալներ, որոնց առյուծի բաժինն ընկնում էր բայածևերի սխալ կազմությանը, դերանունների գործածությանը:

Ստորև կփորձենք աղյուսակի միջոցով ներկայացնել սխալները՝ ըստ բաժանումների:

Լեզվաբերականական սխալներ	Ժարգոնային բառեր	Օտարաբանություններ
Տեսամ, հասամ տվիմ, գալի, տալի, տարամ, տվիմ, հակացամ, ասեցիմ, վիճվեցի, բողոքվեց,ընչի, խի, ընձի,աղչի, ախպեր, , թուա, հելա , կողի, իրիկուն, դե երդվա, իմ համար, fo պես, անձեռնոցիկ, իրոքից, կայնի, խմամ,կերամ, բերիմ, ասիմ, fշերով, հելի, fելի, չեմ կարա, տենամ, սենց, տենց, հըլը, պտի, սկի և այլն:	Տուֆտա, հարիֆ, չի դզում,մեռնեմ կյանքիդ, մեռնեմ fեզ, fյալ, անկապ,ղզիկ, չունեմ ասելու, իմ պանյատով չի, պո լյուբոմու, fֆուր, կոմպ, ճշտով, սխալ հանել, օդերը փակել, ատեց, հոպար, դվիժենի անել, բազար անել, հորս արև, ճիշտ տղա, հավեսով, հոգնածներ, fուչի տղա, հարգված տղա, կասկածող չկա, fվոր պես, տժժալ, թիթիզ, մամայի բալա,	Պրիվետ, պակա, օfեյ մերսի, սալֆետկա, յուբկա, մարշրուտկա, սիգնալ, սվետաֆոր, ջիգյար, տապչկա, սպարտիվկա, շոֆեր, սումկա, զդաչի, ադնառազվի դարյադչնիկ,, մառոժնի, սոկ, պիվա, պեչենի, դաստա, պեռաշկի, պոնչիկ, ապելսին, սամալյոտ, այրոպորտ, վայենկոմատ, պրիզիվ, պոռպկա, սաաբշեննի, աչկարիկ,

	կրուտիտ, ցվրվեցինք մանթռ էղա, բազրվեցի, պրիգնատ գալ և այլն:	շուստրի,,բալկոն, բասեին, կեպկա, զաժիգալկա, տոռմուզ, կաֆե, ֆեշ, վադալազկա, ուպակովկա և այլն:

Սրանք սխալ, ժարգոնային և օտար բառերի ոչ լրիվ ցանկն է, որոնք իրենց խոսքում օգտագործում են աշակերտները:

Մեկշաբաթյա ուսումնասիրություններից հետո որոշեցինք հումանիտար հոսքի 10-րդԱ և տնտեսագիտական հոսքի 10-րդ^{Գ} աշակերտների մոտ հարցաթերթիկների միջոցով անցկացնել քանակական և որակական հետազոտություն:

1	Ձեր խոսքում ի՞նչ տեղ ունեն օտար բառերը	Ընդհանրապես չեմ օգտագործ-ում՝ ոչ մի աշակերտ	Օգտագործում եմ, որովհետև չգիտեմ հայերեն համարժեքը՝ 5 աշակերտ	Պարզապես օգտագոր-ծում եմ սովորու-թյան համաձայն՝ 29 աշակերտ	Ձեմ ուզում առանձնա-նալ, տարբերվել բոլորից, չհայտնվել ուշադրու-թյան կենտրոնում՝ ոչ մի աշակերտ
2	Ձեր խոսքում օգտագործու՞մ եք ժարգոնային բառեր, արտահայտություններ	Այո՝ 16 աշակերտ	Ոչ՝ 5 աշակերտ	Երբեմն՝ 12 աշակերտ	Առանց այդ բառերի չեմ պատկերացնում իմ խոսքը՝ 1 աշակերտ
3	Երբևէ փորձե՞լ եք խոսել միայն գրական հայերենով	Այո՝ 24 աշակերտ	Ոչ՝ 2 աշակերտ	Ձեմ մտածել դրա մասին՝ 3 աշակերտ	Ձեմ փորձել, որովհետև չեմ կարող՝ ոչ մի աշակերտ
4	Ի՞նչը Ձեզ կստիպի հրաժարվել օտար և ժարգոնային բառերից	Լեզվական գրագիտության աճը՝ 4 աշակերտ	Ազգային արժանապատվության զգացումը՝ 2 աշակերտ	Բառապաշարի հարստացումը՝ 9 աշակերտ	Միմիայն ցանկությունը՝ 18 աշակերտ

5	Ու՞մ եք Դուք համարում գրագետ մարդ	Նրան, ով բարձրագույն կրթություն է ստացել՝ 9 աշակերտ	Նրան, ով շատ գիրք է կարդացել՝ 10 աշակերտ	Նրան, ով խոսում է մաքուր հայերենով՝ 9 աշակերտ	Ցանկացած մարդու, ով տիրապետում է նաև օտար լեզվի՝ 8 աշակերտ

Հարցաշարի առաջին հարցը ավելի շատ որակական հետազոտության նպատակով էր առաջադրված: Աշակերտները ոչ թե պետք է ճշեին տարբերակներից որևէ մեկը, այլ շարադրեին իրենց պատասխանը, որը դարձյալ մեզ հնարավորություն կտար ծանոթանալու աշակերտների լեզվական գրագիտության աստիճանին: Նրանցից 5 չէր պատասխանել հարցին, 12 պատասխանել էր, որ իր խոսքը համարում է գրագետ, 14 աշակերտ իր խոսքը կիսով չափ է համարում գրագետ, իսկ ահա 5 աշակերտ գտնում է, որ չունի գրագետ խոսք և ցանկանում է այն կատարելագործել:

Հարցախույզն անցկացնելուց հետո մենք ներկա գտնվեցինք անգլերենի, ռուսաց լեզվի, պատմության և հասարակագիտության դասաժամերին: Օտար լեզվի(հատկապես անգլերենի) դասերին կարողանում էին պատմել դասը, պատասխանել հարցերին, արտահայտել իրենց մտքերը: Սակայն նույն դասաժամերին, երբ անհրաժեշտ էր լինում թարգմանել տեքստը հայերեն, սկսվում էր նույն լեզվաբերականական խառնաշփոթը: Պատմության և հասարակագիտության դասերին թեմայի դասգրքային տարբերակը ներկայացնելիս աշակերտների խոսքը համեմատաբար գրագետ էր: Քննարկումների, հարցուպատասխանների ժամանակ, երբ նրանք ներկայացնում էին իրենց տեսակետները, կարծիքները, հարցադրումներ էին անում, խոսքը թեպետ ազատ էր, հետաքրքիր և տրամաբանական, այնուամենայնիվ լեզվական գրագիտությունը մղվում էր ետին պլան: Նրանք հաճախ դժվարանում էին ներկայացնել, բնութագրել, նկարագրել, վերլուծել, մեկնաբանել, հայտնել իրենց դիրքորոշումը՝ օգտագործելով անհրաժեշտ բառեր, շարահյուսական և բառային հոմանիշներ:

Որքան էլ մենք խոսում ենք աշակերտների լեզվական գրագիտության և կարողունակությունների մասին, այնուամենայնիվ, մենք չպետք է մոռանանք կարևորել ուսուցչի , հայ ուսուցչի դերը: Երբեխան դպրոցում գրագետ խոսք պետք է լսի ոչ միայն հայոց լեզվի ու գրականության դասաժամերին մասնագետ ուսուցչի շուրթերից, այլ մյուս դասաժամերին ևս; Դպրոցում անցկացրած 5-6 ժամվա ընթացքում աշակերտը հայերեն և օտար լեզուներով պետք լսի միմիայն գրագետ և ճիշտ խոսք: Նա ուսուցչից պետք է սովորի զարգացնել իր գիտելիքները և կարողունակությունները:

Ունենալով որոշակի պատկեր աշակերտների գրագիտության, նրանց խոսքում օտար և ժարգոնային բառերի օգտագործման աստիճանի մասին՝ մենք ձեռնամուխ եղանք մեր հիմնական աշխատանքին՝ աշակերտների մոտ լեզվական գրագիտության և կարողունակությունների բարձրացմանը:

ԻՆՉՊԵ՞Ս ԶԱՐԳԱՑՆԵԼ ԼԵԶՎԱԿԱՆ ԳՐԱԳԻՏՈՒԹՅՈՒՆԸ ԱՇԱԿԵՐՏՆԵՐԻ ՄՈՏ

Ասեք ինձ և ես կմոռանամ, սովորեցրեք ինձ, և ես կհիշեմ, մասնակից դարձրեք ինձ, և ես կսովորեմ:

Բենջամին Ֆրանկլին

Մեր հետազոտական աշխատանքի հիմնական նպատակն է ոչ միայն վեր հանել հանրակրթական դպրոցում լեզվական գրագիտության և կարողունակությունների հարցում առկա խնդիրներն թերությունները, այլ ցույց տալ դրանք հաղթահարելու, դրանց որակը բարձրացնելու տարբերակներ, ճանապարհներ: Ինչպես վերևում նշեցինք, տարիներ շարունակ ոչ միայն 10-րդ, այլ նաև դասվանդած բոլոր դասարաններում աշխատանքներ ենք տարել այդ խնդրի լուծման բանալիները գտնելու ուղղությամբ:

Դարեր շարունակ հայ ուսուցիչը եղել է այն նվիրյալը, որն իր գոյության, կեցության հիմքը համարել է հայ սերնդին հայ կրթելն ու դաստիարակելը:

Հայ ժողովուրդը հազարամյակների դժոխային փառուղիներով անցնելով՝ բերել, մեզ է հասցրել մեր մայրենի լեզուն՝ որպես մեր գոյության, մեր հայրենիքի պահպանման կարևորագույն առաջնահերթություններից մեկը: Այսօր մեր ժամանակի կարևորագույն մարտահրավերներին դիմակայելու համար ավելի ու ավելի է կարևորվում գրագետ, կիրթ, համակողմանի զարգացած սերունդ ունենալու հրամայականը: Մեր երկրի ապագա քաղաքացին պետք է ունենա ընդհանուր գրագիտություն, որը կկազմի սովորելու և լեզվական հաղորդակցության հիմքը: Այդ հիմքի վրա կարող են ձևավորվել գրագիտության մյուս ձևերը՝ քաղաքացիական, բնապահպանական, տնտեսական, ֆինանսական, իրավական, առողջապահական, գիտատեխնիկական, թվային և այլն:

Լեզվական գրագիտությունն ու կարողունակությունները չեն ձևավորվում մեկ կամ երկու տարում: Նույնիսկ հիմնական դպրոցն ավարտելուց հետո այն մնում է թերի և անկատար: Ուստի այն զարգացնելը սկսում ենք առաջին իսկ դասաժամերից: Վերևում արդեն նշեցինք հայտորոշիչ թեստի, դրա արդյունքների մասին, որոնք հնարավորություն են տալիս նախանշել հետագա աշխատանքների տեսակը և ծավալը:

Հայոց լեզվի յուրաքանչյուր դաս պարտադիր սկսվում նոր և անծանոթ բառերի ուսուցանմամբ(իսկ դրանք բավականին շատ են): Յուրաքանչյուր դասի աշակերտները սովորում են մի քանի բառ, որոնք դառնում են նրանց բառապաշարի անբաժան մասը: Ամեն դասաժամի, բացի դասագրքային աշխատանքից, աշակերտները կատարում են բառապաշարի հարստացման աշխատանքներ: Դրանք բազմազան են՝ կախված ուսուցանվող թեմաներից: Օրինակ՝ ուղղագրություն և ուղղախոսություն անցնելու ժամանակ մեծ տեղ ենք հատկացնում ուղղագրական խաղերին, քարտային,անհատական, զույգային աշխատանքներին, աղյուսակներ և գծապատկերներ կազմելուն, ուղղագրական քարտեզների միջոցով տառերի բնակավայրը գտնելուն և այլն: Բառագիտության թեման հնարավորություն է տալիս օգտագործել սովորած բառերը, դրանց հոմանիշները, լեզուն մաքրել օտարաբանություններից, գռեհկաբանություններից:

Աշակերտների սիրած առաջադրանքներից են բառաշարքից հոմանիշների զույգեր և եռյակներ կազմելը, նույնարմատ և տարարմատ հականիշներ գտնելը, բարդ և ածանցավոր բառեր կազմելը: Մեծ ուշադրություն ենք դարձնում համանունների, հարանունների իմացությանը և կիրառությանը : Յուրաքանչյուր գիտելիք անպայման ամրապնդվում է գործնական աշխատանքով, քանի որ ցանկացած գիտելիք անօգուտ և անիմաստ է, եթե չի կիրառվում: Լեզվառճական աշխատանքներ կատարելու ժամանակ հաճախ ենք օգտագործում հայտնի նկարիչների կտավների պատկերներ, դասական երաժշտության նմուշներ:

Օրինակ՝ լսում ենք Անտոնիո Վիվալդիի<<Տարվա եղանակները>>, հետո առաջարկում աշակերտներին շարադրանքի միջոցով ներկայացնել այն, ինչ պատկերացնում են, զգում, տեսնում և երևակայում: Նրանք սովորում են օգտագործել պատկերավորման միջոցներ՝ դրանք դարձնելով իրենց բառապաշարի բաղկացուցիչ մասը:

Օգտագործում ենք կիսատ նախադասությունների մեթոդը՝ աշակերտների մոտ ձևավորելու տեսողության, լսողության, համի, հոտի, շոշափելիքի կարողությունները: Աշակերտներին սովորեցնում ենք, որ գիտելիքի 75% ձեռք է բերվում տեսնելու միջոցով, 13%՝ լսելու և 12%՝հոտ քաշելու և համտեսելու միջոցով, ուստի պետք է կարողանալ սովորել բանավոր և գրավոր խոսքի միջոցով արտահայտել, վերլուծել, մեկնաբանել, համադրել ու քննարկել, զարգացնել քննական մտածողություն:

Տեղեկատվական ժանրերն ուսումնասիրելիս աշակերտները դառնում են լրագրողներ, մեկնաբաններ, հեռուստահաղորդավարներ, կազմակերպում և անցկացնում են հարցազրույցներ, ներկայացնում ռեպորտաժներ, թղթակցություններ: Մեր մշտական ուշադրության կենտրոնում է գտնվում նաև բառապաշարի մաքրման ընթացքը: Երեխաներն արդեն իրենք են նկատում իրենց և ընկերների սխալները, շտկում դրանք: Հաճելի է լսել, երբ ծնողները ճշում են, որ նրանք լեզվի հարցում խիստ և

պահանջկոտ են ընտանիի անդամների և շրջապատի մարդկանց նկատմամբ: Մենք, իհարկե, հեռու ենք աշակերտների գրագիտությունը կատարյալ և անթերի ներկայացնելուց: Որքան էլ մենք ցանկանանք ու աշխատենք, միևնույն է դպրոցից դուրս, բակում, այլ միջավայրերում նրանք այնուամենայնիվ օգտագործում են օտարաբանություններ, ժարգոնային բառեր: Սակայն չենք կարող չարձանագրել նաև, որ արդեն ուսումնական տարվա ավարտին աշակերտների խոսքն ավելի հարուստ է, մաքուր և հետաքրքիր: Որակական առումով աճ է նկատվում նաև գրավոր խոսքում:

Տարեվերջյան արդյունքները համեմատելով տարեսկզբի իրենց աշխատանքների հետ՝ աշակերտները ևս արձանագրում են լեզվական գրագիտության աճը, ինչը լրացուցիչ խթան է հանդիսանում լեզվական գրագիտության և կարողունակությունների զարգացման գործում: Ցանկալի վերջնարդյունքներին հասնելու համար մեր և աշակերտների համատեղ աշխատանքը տևական է, շարունակական և հետևողական:

ԱՄՓՈՓՈՒՄ

Ընտրելով հետազոտական աշխատանքի համար այս թեման՝ մենք փորձեցինք մեկ անգամ ևս կարևորել լեզվական գրագիտության և կարողունակությունների զարգացման կարևորությունը և հանրակրթական դպրոցի սովորողներից ակնկալվող վերջնարդյունքները:

Այսօրվա շրջանավարտը՝ Հայաստանի Հանրապետության վաղվա քաղաքացին է, նրա կառուցողը, պաշտպանն ու հզորացնողը: Որքան գրագետ, զարգացած ու կիրթ լինի նա, այնքան իրագործելի ու հնարավոր կլինի մեր երկրի զարգացման տեսլականը:

Մեր գործունեության հիմնական նպատակն է ամենօրյա աշխատանքով նպաստել ՀՊԶ պահանջների իրագործմանը, ապագա սերնդի դաստիարակմանը և երկրի հզորացմանը:

ՀԱՎԵԼՎԱԾ

ՀԱՅՏՈՐՈՇԻՉ ԹԵՍՏ

1. Ո՞րն է կոչվում ուղղագրություն: Քանի՞ ձայնավոր հնչյուն ունի հայերենը:

2. Ո՞րն է կոչվում վանկ, քանի՞ տեսակ է այն լինում:
3. Ո՞րն է կոչվում հնչյունափոխություն:
4. Թվել եռաշարք բաղաձայնները:
5. Տեղադրել բաց թողած տառերը.

Ա-բարիշտ, ս-ղդել, ս-ըթնել, աման-ոյա, ատաղ-ազործ, ձվա-եղ, ու-տագնաց, տարեր-, ա-բասիր, պատ-գամբ, հեք-թ, ու-ածիգ, ոսկեձո-, դ-խուհի, արփիազ-ծ, ա-շտապ, ագ-ազ, տա-ալուծել, ա-տորոշել, ու-տափուշ, բնո-ան, մեղմ-բոր:

6.Գրել տված բառերի հոմանիշները.

Այգաբաց, սյուք, արև, ուժեղ, գեղեցիկ, քաջ, կոտորած, արքա, ուրախ , ծույլ:

7.Մի քանի նախադասությամբ ավարտել միտքը << Եթե ես կարողանայի փոխել աշխարհը... >>

ՀԱՅՏՈՐՈՇԻՉ ԹԵՍՏ

1. Ո՞րն է կոչվում բառ: Քանի՞ տեսակ են լինում ըստ կազմության:
2. Քանի՞ տեսակ են լինում բառերը ըստ իմաստի և ձևի փոխհարաբերության:
3. Քանի՞ խոսքի մաս ունի հայերենը:
4. Որո՞նք են տրոհության նշանները:
5. Լրացնել բաց թողած տառերը:

Սր-նթաց, մ-կաբեր, թավա-գլոր, լուսն-ջք, հն-աբան. որոտ-նդոստ, սիրբե-, օ-ազալար, ա-ահայր, խոզապու-տ, դող-բոցք, երկնամու-, տխե-ծ, դժո-ք, որ-, որ-ատունկ, անձր-որդ, հա-նապակի, հինավուր-, կար-ր, ազգ-ուտ, փ-փուր:

6.Գրել տված բառերի հականիշները.

Արագ, ժրաջան, վեհ, հաճելի, խաղաղ, վայրէջք, բերրի, հինավուրց, օտար:

6. Մի քանի նախադասությամբ ավարտել միտքը<< Իմ ամենանվիրական երազանքին հասնելու համար ես...>>:

ՀԱՐՑԱԹԵՐԹԻԿ

Ստորև ներկայացնում ենք հարցաթերթիկի նմուշօրինակ.

Որքանո՞վ եք Ձեր խոսքը համարում գրագետ:

Ձեր խոսքում ի՞նչ տեղ ունեն օտար բառերը.

ա/ ընդհանրապես չեմ օգտագործում

բ/օգտագործում եմ, որովհետև չգիտեմ հայերեն համարժեքը

գ/պարզապես օգտագործում եմ սովորության համաձայն

դ/չեմ ուզում արանձնանալ, տարբերվել բոլորից, չհայտնվել ուշադրության կենտրոնում

Ձեր խոսքում օգտագործո՞ւմ եք ժարգոնային բառեր, արտահայտություններ.

ա/ այո

բ/ ոչ

գ/երբեմն՝ առիթի դեպքում

դ/առանց այդ բառերի չեմ պատկերացնում իմ խոսքը

4.Երբևէ փորձե՞լ եք խոսել միայն գրական հայերենով

ա/այո

բ/ ոչ

գ/չեմ մտածել դրա մասին

դ/ չեմ փորձել, որովհետև չեմ կարող

5.Ի՞նչը Ձեզ կստիպի հրաժարվել օտար և ժարգոնային բառերից

ա/լեզվական գրագիտության աճը

բ/ազգային արժանապատվության զգացումը

գ/բառապաշարի հարստացումը

դ/ միմիայն ցանկությունը

6.Ո՞ւմ եք Դուք համարում գրագետ մարդ

ա/ նրան, ով բարձրագույն կրթություն է ստացել

բ/ նրան, ով շատ գիրք է կարդացել

գ/ նրան, ով խոսում է մաքուր, գրական հայերենով

դ/ ցանկացած մարդու, ով տիրապետում է նաև օտար լեզվի

Հղումներ՝ 1. Հանրակրթության պետական չափորոշիչներ: Միջնակարգ կրթության շրջանավարտից ակնկալվող կարողունակությունները:

2.Լեզվական գրագիտություն և կարողունակություններ և հանրակրթական հիմնական ծրագրերի ուսումնառության ակնկալվող վերջնարդյունքներ:

3.Մասնակցային դպրոց կրթական հիմնադրամի պարտադիր ատեստավորման վերապատրաստման դասընթաց: